3. Ղեւոնդ Ալիշանը հետեւում էր այն կարծիքին, որ Մակու-չայ գետը նոյն ինքը Տղմուտն է, այսինքն՝ այն գետը, որի ափերին տեղի է ունեցել Աւարայրի ճակատամարտը: Ն. Ադոնցը եւ Լէօն Աղ-չայն են համարում Տղմուտը: Այս երեք պատմաբաններից ոչ մէկը ճակատամարտի որոշակի տեղը չի նշում[8]:

4. Ակադ. Յ. Հ. Մանանդեանը Աւարայրի ճակատամարտի վայր էր համարում Ղարաէյնիից հարաւ ընկած շրջանը, իսկ Ղարա-բուլաղ գետն էլ (Մակու-չայի [ձախ] վտակը)՝ Տղմուտը[9]:

5. Դոցենտ Համօ Յարութիւնեանը ենթադրում է, որ Աւարայրի ճակատամարտի վայրն ինչ-որ տեղ է Աղ-չայ գետի վերին հոսանքի հովտում՝

Արսէն Թոխմախեանը (Թոխմախեան 1882, 31. «Աւարայրի դաշտի միջիցն է անցնում Տղմուտ գետը, որ գլխաւորապէս սկսւում է Տաճկահայաստանի արեւելեան սահմանագլխի Շաւարշ (Շաւարէշ) լեռների հարաւային կողմերից եւ հոսելով արեւմուտքից դէպի արեւելք, երկու հաւասար մասի բաժանելով Աւարայրի դաշտը, Մարիքենդ գիւղի մօտ խառնւում է Կարմիր կամ Կոթուր գետին եւ նրա հետ թափւում է Երասխի մէջ Դարաշամ գիւղի մօտից»):

[8] Ալիշան 1890, 491; Адонц 1908, 316; Լեո 1966, 158: Յաւելենք, որ ճակատամարտի ճշգրիտ տեղին չեն անդրադառնում նաեւ Հ. Ղ. Ինճիճեանը, ով գիտէր լոկ այդ վայրի՝ Շաւարշանի մօտ լինելը (Ինճիճեան 1822, 202, 205, հմմ. Ինճիճեան 1835, 158), Հ. Ս. Էփրիկեանը, ով միայն յղում է Հ. Ղ. Ինճիճեանի, Կ. Կոստանեանցի եւ Գ. Շերմազանեանցի աշխատանքներին (Էփրիկեան 1902, 332), ինչպէս նաեւ նորերս՝ Ռոբերտ Հիւսընը (Hewsen 1987, 32).

[9] Մանանդյան 1936, 151-156 (=Մանանդյան 1966, 175-180): Նշելի է, որ հեղինակի մօտ կոպիտ սխալ կայ. մի տեղ դիպուկ նկատելով, որ Աւարայրով անցած Խոյ – Արտաշատ հին մայրուղին, համաձայն Պեւտինգերեան քարտէզի՝ պիտի գնացած լինէր Ս. Թադէի վանքի մօտով՝ նա միւս դրուագում շտապում է տարուել Ղարաէյնիի մօտերքի Թեղնուտ (Օրթա- եւ Յուխարի-Թեգնիտ, արդի՝ Թեգնետ-Սոֆլա եւ Թեգնետ-Բալա) գիւղերի անուան ու Տղմուտ գետանուան արտաքին նմանութեամբ եւ այդ մայրուղին տանում է Ղարա-բուլաղ գետի ձորահովտով (կոչուած՝ Տայ-զաւար կամ Պաիզաւար), որով անցնում էր ուշ միջնադարից յայտնի Խոյ – Ղարաէյնի – Բայազէտ մայրուղին (նրա մասին տե՛ս ԺԹ դ. գրողներ գեն. Գարդանի եւ Ջ. Մորիերի ուղեգրութիւններում, ըստ՝ Հակոբյան 1934, 106-108, 260-268; Մանանդյան 1966, 173-186): Բայց չէ՞ որ Ղարա-բուլաղը Մակու – Զանգեմարի ձախ վտակ Ղըզլար – Ղզըլ-չայի աջ վտակն էր, որը հոսում էր Ս. Թադէի վանքից 15 կմ արեւմուտք եւ նրա հովտից բաժանուած էր Շաւարշանի բարձր լեռնաշղթայով: Իր վրիպումը շարունակելով՝ Յ. Մանանդեանը քարտէզներից մէկում (էջ 155 կամ 179) Ս. Թադէի վանքը նշում է Ղարաէյնիից մօտ 7 կմ էլ արեւմուտք: